

Ի՞նչ է տնտեսական հետևանքների չեզոքացման վճարումը

Տնտեսական հետևանքների չեզոքացման վճարումը (EIP) պետության կողմից կատարվող վճարում է, որը նախատեսված է օգնելու COVID-19 համավարակից տուժած անձանց: Վճարվող գումար կազմում է 1 200 դոլար՝ յուրաքանչյուր անձի համար:

Շահառուները կարող են ստանալ EIP վճարում անկախ աշխատող կամ գործազուրկ լինելուց: Վճարումն ստանալու համար 2018թ. կամ 2019թ. հարկային հաշվետվությունները ներկայացնելը պարտադիր չէ:

Շահառուները կարող են ստացած լինել այն հետևյալ եղանակներով.

- ◆ Թղթային չեք
- ◆ Ուղղակի փոխանցում կոլեկտիվ կամ անհատական բանկային հաշվին
- ◆ Տնտեսական հետևանքների չեզոքացման վճարի կանխավճարային քարտ
- ◆ Ուղղակի փոխանցում Direct Express քարտին

Լրացուցիչ ռեսուրսներ

Ներքին եկամուտների ծառայություն

- ◆ EIP թեժ գիծ՝
1-800-919-9835
- ◆ <https://www.irs.gov/coronavirus/economic-impact-payment-information-center>

Սոցիալական ապահովության վարչություն (SSA)

- ◆ <https://www.ssa.gov/coronavirus/eip-cares-act>

Չարցե՛ր ունեք Կապվե՛ք մեզ հետ

OPRABAinfo@disabilityrightsca.org
www.disabilityrightsca.org
(800) 776-5746

Տնտեսական հետևանքների չեզոքացման վճարումներ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎՃԱՐԱՌՈՒՆԵՐԻ ՉԱՄԱՐ

Վճարառուների ուսումնասիրման և շահառուների աջակցության գրասենյակ

Ծրագիրն իրականացնում է՝
Disability Rights California
*California's Protection
and Advocacy System*



Ո՞վ կարող է ծախսել

- ◆ Տնտեսական հետևանքների չեզոքացման վճարումը (EIP) Սոցիալական ապահովության վարչության նպաստ չէ: Վճարառուները գուցե չկարողանան կառավարել շահառուների վճարումները առանց նրանց թույլտվության:
- ◆ Դուք չեք կարող որոշել՝ ինչի վրա ծախսել EIP-ն և չեք ել կարող ասել շահառուին, թե ինչպես նա ծախսի: Դուք շահառուին պետք է հայտնեք, թե երբ է EIP-ն վճարվում: Եթե շահառուն խնդրի տրամադրել վճարումը, պետք է վճարման ողջ գումարը նրան տրամադրեք:
- ◆ Դուք կկարողանաք օգնել շահառուին ծախսել կամ կառավարել գումարը, եթե շահառուն խնդրի ձեզ այդ անել: Այս օգնության տրամադրումը չի կազմում ձեր դերի մասը որպես շահառուի վճարառու:

Ինչպե՞ս կարելի է այն ծախսել

- ◆ Շահառուն EIP-ն կարող է ծախսել այնպես, ինչպես որոշի:
- ◆ Նա կարող է որոշել օգտագործել այն կենսական ծախսերի համար, բայց դուք չեք կարող ստիպել նրան գումարն օգտագործել այն ծախսերի համար, որոնք որպես կանոն վճարվում են շահառուի՝ SSA կամ Medi-Cal նպաստների միջոցով:
- ◆ Շահառուները կարող են ավելացնել այն նաև իրենց PASS ծրագրին կամ ABLE հաշվին:

Ներկայացուցիչ-վճարառուի հաշվապահական հաշվետվությունները

Առաջին 12 ամսվա համար կարիք չկա EIP-ն ներառել տարեկան հաշվապահական հաշվետվություններում, քանի որ այն համարվում է ոչ թե եկամուտ, այլ հարկային արտոնություն:

Կազդի՞ այն նպաստների վրա

EIP-ն չի.

- ◆ հաշվվում որպես եկամուտ,
- ◆ ներառվում զգալի եկամտին ուղղված աշխատանքում, կամ
- ◆ հաշվվում որպես SSI կամ Medi-Cal ռեսուրսային սահմանափակում շահառուի կողմից այն ստանալուց հետո 12 ամսվա ընթացքում:

Երկարաժամկետ ինամքի կենտրոններ

- ◆ Երկարաժամկետ ինամքի կենտրոնները ինամառուին գուցե չխնդրեն փոխանցել իր EIP-ն:
- ◆ EIP-ն հարկային արտոնություն է և չի հաշվվում որպես ռեսուրս:
- ◆ Եթե կենտրոնը վերցնում է վճարումը, կարող է բողոք ներկայացնել Կալիֆորնիա Նահանգի գլխավոր դատախազին, Դաշնային առևտրային հանձնաժողովին և արտոնագրող գործակալություններին: